ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑԻՇԱՏԱԿՔ ԱՇՆԱՅԻՆ Ա.ԻՈՒՐՑ

ԱՅԳԵԿՈՒԹՔ

Դիմէ հրսկայաքայլ բնութիւն յեղծումն իւր և յաւեր.
Ա.յլ տերկք յանկանելն՝ ըզբարունակըն մերկացեալք՝
Ըզխաղող 'ի յայտ ածեն փողփողենէջ 'ի կարկեհան.
Արիւք պայծառադեղ յակընթափայլ երփնազարդին,
կան բացեալ ըշտեմարանք և հընձանաց ածի դարման։
Արժանաւոր դից օշարակ՝ աւիշ պայծառ և կարմրերփին,
Քաղցրահամ ծոլան հիւթոյ և արևուն բոցակիզման,
Հաճոյից մեր աղբերակն և աչխարհի վայելք հեշտից,
Եկ փարատել ըզձանձրոյթ որ կռիւ ընդդէմ ինձ յարդարէ,
Եւ վայրիկ մի զոնեա ղերանութիւն ինձ չընորհեա։
Սպանդարամետ՝ խրախութեանց աստուած և հայր զբաւրթութեան,
Դու սրփեալ տարածեցեր չուրջ ընդ լերինքս վոսրոի
Ըզկորզեալ բարունակս մնա 'ի դրրաց արշալուսոյն.
Դու ծածկեցեր այգեստանեաք զապառաժուտքս լեսբոսի.
Քոյդ անապակ ելից յաւիւն ըզդիւցազունս և ըզմուսայս,
Եւ պաշտօն քո կըրթեաց ըզցունաստան, ըզդեռ վայրագն։
Ինքնին դու ըզկելտեանքս վառէիր արիասիրտ,
Մինչ յաղթականն այն ժողովուրդ 'ի գագաթանց Ապենինեանց
Եկն ընդ յարկաքն ծրխաշունչ տապալ չախչախ տալ ըզՀոռոմս.
Պարգևաք քոյին կամէր ճոխ յարդարել ըզհայրենիսն
Եւ ըզճակատն պրսակեալ 'ի բարունակս Եսպերիոյ
Գինեհարեալ լի հրրճուանաք անց ընդ լերինսըն վերրստին.
Կրրկնէին հովիտք ըզձայն աղաղակին և ըզխրնծիցս,
Եւ նիզակքն բագսի ըզյաղթական չուն վարէին։
Օշարակիդ քում պարտական է Գաղղիա զիւրքն բերկրանս,
Ըզվայելքս խրախճանաց և ըզհամեմս ըսթափ բանից,
Զարուեստ ըզհոգ փարատելոյ և մերժելոյ զաղէտս անյուշ։

Ա.յլ ահա յառաջէ ընդ այգեստան խուռնն ժողով
Ուր սրփոին գեղայօրէն, և սկիզբն առնու աշխատութիւնն։
Ծերունին՝ եկաւորեալ ակընկալեաք նոր խազմըզոյ,
Հասեալ բերկրապատար 'ի սարահարթ կողաց լերին

digitised by A.R.A.R.@

Անդ տեսանէ ըզլինդոր և զեղիչս լի յըղմայլման,
Հատանել յորիմատունկ 'ի նոյն զողկոյզն անուշահամ...
Ոյց ձայնից 'ի մատաւոր լերանց ամբոխն առնէ դարձուած։
Ի հեռաստանն 'ի բացէ թըմբուկք՝ սըրինգք և չեփորայք
Ի գեղջոնս հընչեն երգոց՝ լըցեալ զհովիտն արձագանգօք։
Մինչ այս մինչ այն, երգոցն հընչմունք և գեղգեղմունք 'ի կուրծս այգեաց
Պըշուցանեն ընդ բըլուրն ըզհայեցուածըս որսորդին։
Ա՛յլ վաստակըն յառաջէ, և սակառիքըն լայնասիփուռ
Կարմիրանգ ողկուզօք կուտեալք զեղուն լիաբերան։
Գոլէն կորաքամակ ծրնկօք բարձիցըն դեղեկոտ
Ցամրընթաց ածէ տանի յայգեստանէն 'ի չտեմարան.
Մանկրտին երամվին դիմեն վաղեն շուրջ ըղնովաս,
Եւ 'ի յայտ առնեն բացուստ ուրախալիր աղաղակաւ։
Մինչ խաղողն ընդ մարդակաւ է. և ծորան ջինջ և մաքուր
Ի հընձանն հոսի՝ քանի ըմպողք մրխեն անդ զըմպանակս
Ուր յեռանդրն կայտառելով թեթեւագին ցայտէ փրփուր։
Առ լերամիջք արևմըտից կարճատի աստղն տըրընկեան
Եւ ամխոնըն գումարի և վաղվաղէ 'ի վերադարձ.
Հասանէ Յպանդարամետ ըզդրբուատիս քո երգելով,
Եւ պարէ շուրջ ըզբայլիւք որ զայգեաց կուրծս ածեն բերեն
Ծաղկալից սաղարդուն պրսակաւոր զայն յորինեալ.
Եւ ողկոյզք 'ի դրասանդ կախին ցըլուցն 'ի ճակատուց։
Հաճոյք խառն 'ի խուռն և բերկրութիւն անպայման
Երկանիկ կրթողաց վախճան առնեն երեկորին.
Գոհ են յանձինս ամենեքեան, գոհ ըզբաղդէն և ընդ մարդիկ.
Խըմբելոց նախանձողաց նուազ մի ըզձեռաբն զինուորէ։
Ընդմիջեաց Յպանդարամետ զատելութիւն և զոխ քինու,
Ցիրապետել տայ ըզսէր և շուրջ սրփուէ զանձուկ գրթոյ։
Ծերք երկու խանդակարօտք կան առ միմեանըս գիրկս արկեալք
Երկոքին ևս արձակեն կիսահագագ բանս հատկըլեալ,
Ի բացխըփիկ իւրեանց աչս հրավառ ցայտեն նամէտ նըշոյք.
Ջանահշնար լինին 'ի զուր առնել 'ի յայտ զաղեաց գորով,
Եւ սըրտեռանդն անձկանաք 'ի հաւատել թեակոխեալք
Երկոքեան կափկափելով կընքեն երդումն 'ի սէր միմեանց։
Գրիգորիոս առ մըտերիմն երիտասարդ ածել զիւրըն նըւագ.
Ընդ ոտիւքն գողդոջուն սասանել իմն ըղդայ զերկիր,
Ցեսեալ կործան ըզձեղունքն հոլովել և զառաստաղ,
Եւ զի սեղանն յոր յենու՝ 'ի թաւալել կայ մատալուտ.
Ինքնին թաւալագլոր թափէ զբաժակն՝ ուր ջախջախեալ
Փայլ 'ի փայլ ցընդի շողշող ցան ընդ գետինքն յողողման։
Գինըմպուքն աղբիկաւ իմն յարուցեալք մեկնին 'ի բաց
Հընչեցուցեալ 'ի բացէ զիւրեանց կացուրդն և զաղաղակ։

ՍԷՆ ԼԱՄՊԷՐ.

digitised by A.R.A.R.@